ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 499 - Ա

ԱՈՒՏԻԶՄ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՈՒՏԻԶՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել Աուտիզմ ազգային հիմնադրամի կողմից իրակա-նացվող՝ 36,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն աուտիզմ ունեցող երեխաներին» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Աուտիզմ ազգային հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00877719) «ԻՎի մոթորս գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00215691) 2023 թվականի նոյեմբերի 24-ին կնքված՝ N EVMG23-71 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2023 թվականի արտադրության «JAC Sunray» HFC6601K1HDV մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում՝ 14,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն:

3. Աուտիզմ ազգային հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով

ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

15.07.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ